**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1**
**N ԲԸԾՁԲ-10/9-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **09 .12.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունն, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Վ. Առաքելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 25.06.2013թ. կնքված № ԲԸԾՁԲ-10/9-1 ծածկագրով գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2, ինչպես նաև Պայմանագրին կից 26.02.2014թ կնքված N 1 Համաձայնագրի 3.3 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից կնքված N 1 Համաձայնագրով նախատեսված «***Ագարակում բնակելի շենքի կառուցման տեխնիկական հսկողություն***» ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն և 2014թ շինարարական աշխատանքներին համամասնորեն մատուցվելիք ծառայություններից 375 000 դրամ ծառայությունների մատուցումը տեղափոխել հաջորդող տարիներին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ ըստ սույն փոփոխությանը կից Հավելված N 1-ի և 2-ի: Արդյունքում՝ N 1 Համաձայնագրի գինը կազմում է 1 650 000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) դրամ: 1 275 000 դրամի Ծառայությունը կմատուցվի 2014թ., իսկ մնացած 375 000 դրամի Ծառայությունը կմատուցվի հաջորդող տարիներին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի Համաձայնագիր:

1.2 Սույն Փոփոխության պահանջներին համաձայն այն կնքելուն հաջորդող տարիներին նախատեսված Ծառայությունը կմատուցվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագիր կնքելու միջոցով: Ընդ որում, Կատարողը պարտավոր է Համաձայնագիր կնքել՝ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Կատարողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում՝ ընդ որում ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծարվում է: Այն դեպքում, երբ Ծառայությունը մատուցելու համար տվյալ տարվան հաջորդող տարում չեն նախատեսվի համապատասխան ֆինանսական միջոցներ՝ պայմանագիրը այդ մասով կլուծվի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Պատվիրատուն սույն փոփոխությամբ ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Փոփոխության N 1 և 2 Հավելվածները կազմված են 1 թերթից, հանդիսանում են Փոփոխության անբաժանելի մասը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Հուսալի Կամար» ՍՊԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | Սյունիքի մարզ, գ. Տոլորս |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Արցախբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011117034 | Հ/Հ 223071101198 |
| ՀՎՀՀ 02703824 | ՀՎՀՀ 09811047 |
| ՀՀ պաշտպանության ն... ՆՏԱ դեպարտամենտի ... | Տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ |

Հավելված N 1
ԲԸԾՁԲ-10/9-1 պայմանագրի
N 1 Փոփոխության

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ, ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ծառայության անվանում | Ծառայության գին/դրամ/ | Ըստ N 1 Համաձայնագրի | Սույն Փոփոխության արդյունքում | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2014թ. իրականացվելիք շինարարական աշխատանքներին համաժամանորեն, բայց ոչ ուշ. քան 20.12.2014թ. | 2014թ. իրականացվելիք շինարարական աշխատանքներին համաժամանորեն, բայց ոչ ուշ. քան 20.12.2014թ. | Նախատեսվում է ֆինանսավորել հաջորդող տարիներին՝ համապատասխան ֆինանսական միջոցի առկայության դեպքում |
| 1 | Ագարակում բնակելի շենքի կառուցման տեխնիկական հսկողություն | 1 650 000 | Համաշինարարական աշխատանքների, ներքին ջրամատ. և կոյուղու, էլ.լուսավոր., էլ.ուժային սարք., ջեռուցում և օդափոխ., ներքին գազաֆ., ցածր լարման գիծ, արտաքին ջրամատ. և կոյուղու, արտաքին գազամատ., բարեկարգման աշխատանքների տեխնիկական հսկողություն: 1 650 000 դրամ | Համաշինարարական աշխատանքների, ներքին ջրամատ. և կոյուղու, էլ.լուսավոր., էլ.ուժային սարք., ջեռուցում և օդափոխ., ներքին գազաֆ., ցածր լարման գիծ, արտաքին ջրամատ. և կոյուղու, արտաքին գազամատ., բարեկարգման աշխատանքների տեխնիկական հսկողություն: 1 275 000 դրամ | Աշխատանքների ավարտի տեխնիկական հսկողություն 375 000 դրամ |

Հավելված N 2
ԲԸԾՁԲ-10/9-1 պայմանագրի
N 1 Փոփոխության

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ծառայության անվանում | Ծառայության գին/դրամ/ | Ըստ N 1 Համաձայնագրի | Սույն Փոփոխության արդյունքում | |
|---|---|---|---|---|---|
| | | | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ., բայց ոչ ուշ. քան 25.12.2014թ. | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ., բայց ոչ ուշ. քան 25.12.2014թ. | Նախատեսվում է ֆինանսավորել հաջորդող տարիներին՝ համապատասխան ֆինանսական միջոցի առկայության դեպքում |
| 1 | Ագարակում բնակելի շենքի կառուցման տեխնիկական հսկողություն | 1 650 000 | 1 650 000 դրամ | 1 275 000 դրամ | 375 000 դրամ |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեխնիկական<br>ՆՏԱ դեպարտամենտի պետ | «Հուսալի Կամար» ՍՊԸ<br>Տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ |

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

**ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-10/9» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի արդյունքում 25.06.2013թ. կնքված № ԲԸԾՁԲ-10/9-1 ծածկագրով գնման Պայմանագրին (այսուհետև՝ Պայմանագիր) կից 26.02.2014թ կնքված N 1 Համաձայնագրում 2014թ-ի դեկտեմբերի 9-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Պատվիրատուի մոտ առաջացել է Պայմանագրով նախատեսված ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցերի փոփոխության անհրաժեշտություն:

***Փոփոխության նկարագրություն:*** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից կնքված N 1 Համաձայնագրով նախատեսված «Ագարակում բնակելի շենքի կառուցման տեխնիկական հսկողություն» ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն և 2014թ շինարարական աշխատանքներին համամասնորեն մատուցվելիք ծառայություններից 375 000 դրամ ծառայությունների մատուցումը տեղափոխել հաջորդող տարիներին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ ըստ փոփոխությանը կից Հավելված N 1-ի և 2-ի: Արդյունքում՝ N 1 Համաձայնագրի գինը կազմում է 1 650 000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) դրամ: 1 275 000 դրամի Ծառայությունը կմատուցվի 2014թ., իսկ մնացած 375 000 դրամի Ծառայությունը կմատուցվի հաջորդող տարիներին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի Համաձայնագիր:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 և N 1 Համաձայնագրի 3.3 կետերը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

**Հեռախոս՝ <u>094-31-31-95:</u>**

**Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**